## Դրամաշնորհային հաշվետվություն N 2

**1. Ընդհանուր տեղեկատվություն**

| | |
|---|---|
| **Ծրագրի անվանում** | Տարեցների և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց տնային պայմաններում խնամքի ծառայություններ |
| **Դրամաշնորհի N** | 1032-11002/23 Վ |
| **Դրամաշնորհատու կազմակերպություն** | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն |
| **Դրամաշնորհառու կազմակերպություն** | Հայկական Կարմիր Խաչի Ընկերություն |
| **Ծրագրի իրականացման ժամանակահատված** | 03.01.2023-30.12.2023 |
| **Հաշվետու ժամանակահատված** | 01.07.2023-30.09.2023 |
| **Ներկայացման օր** | 19.10.2023 |
| **Հաշվետվության պատասխանատու (անուն, ազգանուն, պաշտոն)** | Կարինե Կուրղինյան<br>Ծրագրի համակարգող |

**2. Բովանդակային հաշվետվություն**

**2.1 Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:**

Հայկական Կարմիր խաչի ընկերությունը «Տարեցների և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց տնային պայմաններում խնամքի ծառայություններ» ծրագրի շրջանակներում իրականացրել է խնամքի ծառայություն՝ միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոնի կողմից ուղեգրված շահառուների համար: Յուրաքանչյուր շահառուի համար կազմվել է անհատական խնամքի պլան՝ ելնելով վերջինիս կարիքների առանձնահատկություններից, որի համաձայն էլ իրականացվել է խնամքի տրամադրումը:

Խնամքի տրամադրման գործողությունների և տրամադրված խնամքի պարագաների վերաբերյալ կատարվել են համապատասխան գրառումներ խնամառուների դինամիկ հսկողության թերթիկներում, ինչպես նաև խանամառուի անձնական թղթապանակում:

Ծրագրի համակարգողը հաշվետու ժամանակահատվածում իրականացրել է խնամվողներին տրամադրվող ծառայությունների մասնակցային մշտադիտարկում:

Ըստ սահմանված աշխատանքային պլանի, իրականացվել է՝

- սոցիալ-առողջապահական խնամքի տրամադրում, ներառյալ խնամքի պարագաների տրամադրում,
- կենցաղային օգնություն և սպասարկում,
- կամավորների այցելություններ,
- սոցիալական աշխատողի այցելություն, գնահատում, ուղղորդում,
- հոգեբանի խորհրդատվություն,
- մշակութային միջոցառումների կազմակերպում,
- մոնիտորինգային աշխատանքներ:

Հաշվետու ժամանակահատվածում ՀԿԽԸ Վայոց Ձորի ավագ բուժքրոջ մասնակցությամբ կատարվել են մոնիթորինգային այցեր ծրագրի բոլոր շահառուներին՝ խնամքի որակի և սպասարկող անձնակազմի կատարած աշխատանքների վերահսկողության, ինչպես նաև շահառուների կարծիքները և առաջարկությունները լսելու նպատակով:

Շահառուների դինամիկ հսկողության ընթացքում հայտնաբերված խնդիրներին տրվել է արագ արձագանք, կատարվել համապատասխան ուղղորդումներ, աջակցել փաստաթղթերի ձեռքբերման, լրացման հարցում, կազմակերպվել վերջիններիս տեղափոխություն բժշկական հաստատություններ:

Ս/թ. հուլիսի 12-ից շահառու Վիկտորյա Այվազյանը դադարել է սպասարկվել՝ այլ տարածաշրջան տեղափոխվելու պատճառով: Նոր շահառուի ընդգրկման նպատակով կազմակերպությունը դիմել է միասնական սոցիալական ծառայություն՝ առաջարկելով Ա խմբի շահառու Վարսեն Գալստյանին: Սոցիալական աշխատողը

և ավագ բուժքույրը կատարել են առաջարկվող շահառուի կարիքների գնահատում և համապատասխան աջակցություն ցուցաբերել ՄՍԾ աշխատակիցներին՝ շահառուի վերաբերյալ այլ տվյալների տրամադրման հարցում:
Սոցիալական միջոցառումներում շահառուների ընդգրկման նպատակով օգոստոսի 15-ին կազմակերպվել է այց «Գլաձորի համալսարան» պատմամշակութային արգելոց-թանգարան, որը գտնում է Վայոց ձորի մարզի Վերնաշեն գյուղում: Միջոցառման մասնակից 20 տարեցներից երեքը ընդգրկված էին ՀԿԽԸ այլ ծրագրերում, որը նպաստում է այլ շահառու խմբերի հետ ծրագրում ընդգրկված տարեցների ինտեգրմանը:
Բացի պլանավորված այցելություններից, պարբերաբար հեռախոսակապի միջոցով ծրագրի աշխատակիցները փորձել են իրազեկ լինել շահառուների վիճակի մասին և արձագանքել՝ ըստ անհրաժեշտության: Շարունակական են նաև կամավորների կողմից կատարվող այցերը և աջակցության տրամադրումը վերջիններիս համար գնումների կազմակերպման, զրույցի, զբոսանքի, ընթերցանության և այլ հարցերում:
2023 թ.-ի 3-րդ եռամսյակի ընթացքում տնային խնամքի ծառայության շրջանակներում սպասարկվել է 26 խնամառու:

**2.2 Խնդրում ենք նկարագրել ծրագրի առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների , նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ ծրագրի խնդիրների/նպատակի իրականացմանը:**

Հաշվետու ժամանակահատվածում, ըստ սահմանված աշխատանքային պլանի, իրականացվել են հետևյալ միջոցառումները.

- Սոցիալ-առողջապահական խնամքի տրամադրում՝ խնամքը տրամադրվել է խնամք իրականացնող անձնակազմի՝ բուժքույրերի միջոցով կարիքների գնահատման և անհատական խնամքի պլանի հիման վրա: Այն ներառել է բժշկի նշանակմամբ դեղերի և բժշկական նշանակության նյութերի ստացման գործում աջակցություն, վերքերի մշակում, զարկերակային ճնշման որոշում, արյան մեջ գլյուկոզայի քանակի վերահսկում, ուղղորդում բժշկական հաստատություն՝ հետազոտման և այլն: Կարիքի դեպքում, խնամքին զուգահեռ խնամառուները ապահովվել են նաև խնամքի միջոցներով:
- Տնային խնամողների կողմից կենցաղային օգնություն և սպասարկում է տրամադրվել շահառուներին, մասնավորապես անձնական հիգիենայի պահպանում, տան մաքրում, սննդի պատրաստում, կերակրում, լվացք և կենցաղային մի շարք այլ գործառույթներ՝ կարիքների գնահատման և անհատական խնամքի պլանի հիման վրա: Ծառայությունը տրամադրվել է տնային խնամողների կողմից:
- Կամավորների այցելություններ, ներառյալ ընկերակցում, զրույց, ընթերցանություն, գնումների իրականացում, աջակցություն մանր կենցաղային հարցերում, այլ՝ կարիքների գնահատման և անհատական խնամքի պլանի հիման

վրա: Կամավորների գործունեությունը նպաստում է նաև շահառուների սոցիալիզացիային:
• Սոցիալական աշխատողն իրականացրել է խորհրդատվության տրամադրում, գնահատում, ուղղորդում՝ տարածքային ՄՍԾ մասնագետների հետ սերտ համագործակցությամբ:
• Շահառուների առողջական վիճակի արդյունավետ վերահսկողության համար ավագ բուժքույրը և խնամքի բուժքույրերը մշտական կապի մեջ են եղել տեղամասային բժիշկների հետ: Անհրաժեշտության դեպքում կազմակերպվել են բժիշկների տնային այցեր:
• ՀԿԽԸ Վայոց Ձորի մարզային մասնաճյուղի ավագ բուժքույրը և ծրագրի համակարգողը իրականացրել են մոնիտորինգային աշխատանքներ՝ այցելելով սպասարկվող շահառուների տներ՝ գնահատելու մատուցվող ծառայությունների որակը:
• Սոցիալական միջոցառում է կազմակերպվել «Տարեցների և հաշմանդամություն ունեցող անձանց տնային խնամք» ծրագրի շահառուների համար: Միջոցառումները պլանավորվում են ծրագրի շահառուների հետ և նրանց առաջարկությունների հիման վրա՝ այպես, որ ծրագրում ընդգրկված տարեցները շփվելու հնարավորություն ունենան նաև այլ ծրագրերում ընդգրկված մարդկանց, կամ հասարակության այլ խմբերի ներկայացուցիչների հետ, հետաքրքիր առօրյա և հաճելի ժամանց ունենան: Կազմակերպվել է նաև հյուրասիրություն:

**Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)**

Հայկական Կարմիր խաչի ընկերությունը անդամակցում է տարեցների հարցերով միջգերատեսչական հանձնաժողովին, Տարեցների պաշտպանության ցանցին, որի շրջանակներում շահագրգիռ կողմերի հետ քննարկումներ է ունեցել ոլորտին առնչվող օրենսդրական փաստաթղթերի, ուղեգրման կարգի, խնամքի տարբեր մոդելների վերաբերյալ սույն թվականի սեպտեմբեր ամսին:
Հաշվետու եռամսյակի ընթացքում կազմակերպվել է այցելություն «Գլաձորի համալսարան» պատմամշակութային արգելոց-թանգարան: Մասնակիցները շատ ուրախ էին միասին անցկացրած լավ ժամանակի համար, մեծ սպասումով էին եկել միջոցառմանը և ոգևորված, որ նման հանդիպումները դարձել են շարունական: Միջոցառման վերաբերյալ նյութին կարող եք ծանոթանալ հետևյալ հղումով՝
https://redcross.am/news/cultural-activities-for-home-care-beneficiaries.html

**2.3 Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են ծրագրի գործողությունների իրականացմանը:**

Ծրագրի իրականացման ընթացքում խնդիրներ չեն առաջացել: Սակայն պետք է նշել, որ դրամաշնորհի շրջանակներում սպասարկվող տարեցները հիմնականում

ունեն առողջական խնդիրներ, որի հետևանքով միշտ չէ, որ կարողանում են մասնակցել պլանավորված սոցիալական միջոցառումներին:

**2.4 Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):**

Հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսվում է.

1. Անհատական խնամքի պլաններին համապատասխան տրամադրել խնամքի ծառայություններ՝ բազմաֆունկցիոնալ թիմի ներգրավմամբ:
2. Կազմակերպել դասընթացներ և փորձի փոխանակման հանդիպումներ խնամքում ներգրավված աշխատակիցների և կամավորների համար:
3. Անհատական կարիքների հիման վրա շահառուներին ապահովել խնամքի պարագաներով:
4. Սննդային փաթեթների տրամադրում
5. Նպաստել շահառուների սոցիալիզացիային՝ կամավորների ներգրավմամբ, ինչպես նաև մշակութային միջոցառումների կազմակերպմամբ:

**2.5 Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել ծրագրի աշխատանքային պլանով, բայց իրականացվել են ծրագրի նպատակին հասնելու համար:**

Հաշվետու ժամանակահատվածում նման գործողություններ չեն իրականացվել: